

Մեր հին աղաթից ընկել ենք, գրրկվել,
Նորն էլ չըգիտենք թե ինչ է եկել¹:

Հովհաննես Թումանյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԵՎԵԼՈՒՄԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ*

Հայոց քաղաքական կողմնորոշումների (արևելումների) մասին մեր **հին** պատկերացումները վերջին մեկ տարվա ընթացքում բախվել են Հայաստանի **նոր** իրողություններին, և չկարողանալով բացատրել դրանց իմաստն ու բովանդակությունը՝ լիովին կորցրել են երկրի ներսում ու նրա շուրջը տեղի ունեցող տեղաշարժերն ըմբռնելու ու բացատրելու ճանաչողական գործառույթները:

Այս տխուր փաստը հանրային մակարդակի վրա դրսևորվում է մեզանում գրեթե ամեն օր արտաբերվող՝ թումանյանական «Հառաչանքի» խոսքերի միջոցով, իսկ փորձագիտական շրջանակներում ընդունել է հետևյալ երկանդամ գլուխկոտրուկի տեսքը.

1. 2018-ի գարանը տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունից» հետո Հայաստանի նոր իշխանությունները փոխել են մեր երկրի արտաքին քաղաքական կողմնորոշումը, բայց որդեգրելով դավադիր կեցվածքներ՝ համառորեն զգուշանում են արտահայտվել այդ մասին՝ շարունակելով սիրաշահել մեր ավանդական գործընկեր Ռուսաստանի ղեկավարությանը:

2. Անցած մեկ տարվա ընթացքում մեր երկրի արտաքին քաղաքականության ասպարեզում տեղի ունեցած տարօրինակ փոխակերպումները Հայաստանի քաղաքական կողմնորոշման փոփոխության արտահայտությունը չեն, այլ սոսկ նոր իշխանությունների անփորձության ու արհեստավարժության բացակայության հետևանքը:

Սրանից ստացվում է, որ մենք գործ ունենք կան հանցավոր դավադրության, կան էլ անուղղելի տգիտության հետ, որն արտաքին քաղաքականության ասպարեզում ոչ պակաս վտանգավոր է, քան առաջինը: Մինչդեռ ուշադիր քննելով այս երկանդամ գլուխկոտրուկը՝ դժվար չէ նկատել, որ նրանում առկա հաստատական ու ժխտական հարցադրումները կտրվելով դիտարկման բուն առարկայից՝ Հայաստանից, վերածվել են **հիմնային սխալի**²:

*Ընդունվել է տպագրության 1.06.2019:

1 **Թումանյան Հ.**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3., եր., «ՀՄՄԻ ԳԱ հրատ» 1989, էջ 74:

2 **Հիմնային սխալ** - error fundamentalis - արտաքրուստ՝ միանգամայն ճիշտ դատողություն, որը կառուցված է սխալ հիմքի վրա, ուստի վերջնաարդյունքում անպայման վերածվում է սխալի:

ԺԱ (ԺԷ) փարի, թիվ 2 (66), ապրիլ-հունիս, 2019
ՎԿՎ համահայկական հանդես

Իսկ առարկայական իրողությունն այն է, որ 2018-ին Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխության արդյունքում ո՛չ մեր երկրի արտաքին քաղաքականությունն է լուրջ փոփոխություններ կրել և ո՛չ էլ այն սպասարկող արհեստավարժ դիվանագիտական կորպուսը: Փոփոխությունը տեղի է ունեցել նրան ուղղություն տվող քաղաքական ընտրանու ձևավորման աշխատակարգերի և գործելակերպի մեջ: Առ այդ՝ Հայաստանի իշխանության առաջին դեմքերի կողմից՝ 1991 թվականից հետո էլ Մոսկվայի հետ համաձայնեցվող՝ ժառանգորդի (ռուսերեն՝ преемник) նշանակման իրողությանը 2018-ին փոխարինել է ժողովրդի կողմից սեփական իշխանության ձևավորման փաստը: Այսինքն՝ որքան էլ տարօրինակ է՝ «Հանրապետական» կոչվող կուսակցության իշխանության տապալումը հանգեցրել է ազգի գերիշխանության (սուվերենության) սկզբունքը մարմնավորող **հանրապետական վարչակարգի** հաստատմանը:

Երկրի քաղաքականությունը ձևավորող խորքային սուբյեկտի փոփոխության արդյունքում մեզանում սկիզբ է առել արտաքին աշխարհում սեփական շահերի փնտրտուքի մի երկարատև ու ցավագին գործընթաց: Ուստի այսուհետև ամեն պատեհ կամ անպատեհ առիթով **հայկական կողմնորոշման** մասին խոսելու փոխարեն՝ պարտավոր ենք կոնկրետացնել ու հստակեցնել այդ խիստ տարողունակ հասկացությունը: Պատճառն այն է, որ ժամանակին մեզանում այն ձևակերպվել է երջանկահիշատակ Սարգիս Զեյթյանի կողմից՝ որպես «սառը պատերազմին» բնորոշ «կան-կան»-ի հանդեպ հայկական հակազդեցություն՝ «ոչ Արևելք, ոչ Արևմուտք» բանաձևի տեսքով: Սկզբում հանդես գալով որպես Հայաստանի ու հայության արտաքին քաղաքական արևելամենների դաշնակցական ընկալում՝ այն վերջին տասնամյակներում դարձել է հանրապետության գրեթե բոլոր քաղաքական ուժերի հավատամքը: Բայց քանի որ «սառը պատերազմին» դարաշրջանը վաղուց է ավարտվել, այս սկզբունքորեն ճիշտ բանաձևի նախկին հիմնատարրերն անցած տարիներին փոխել են իրենց ներքին բաղադրությունն ու փոխադարձ հարաբերությունների բնույթը:

Որովհետև եթե հայոց քաղաքական կողմնորոշումները բնութագրելու համար 1990-ականների սկզբներին, մեծ վերապահումներով հանդերձ, դեռ հնարավոր էր «Արևմուտք» և «Ռուսաստան» եզրույթների միջոցով ինչ-որ կերպ բնորոշել մի կողմից՝ «սառը պատերազմում» հաղթանակ արձանագրած աշխարհաքաղաքական բևեռը, իսկ մյուս կողմից՝ նրա հետ հարաբերությունների ճշգրտմամբ զբաղվող նախկին ԽՍՀՄ-ի իրավաժառանգորդին՝ Ռուսաստանի Դաշնությանը, ապա այսօր այդ հասկացությունները սկզբունքորեն նոր բովանդակություն և իմաստ են ստացել:

Համաշխարհայնացման պայմաններում վերջին երեսնամյակում Արևմուտքը հանդես է եկել ոչ միայն որպես ուժի բևեռ, այլև ամբողջական արժեհամակարգ, և արևմտամետությունը՝ որպես արժեքային կողմնորոշում, կլանել է գրեթե ողջ քաղաքակիրթ աշխարհը, քանզի նրան հակադրվող մեկ այլ ձևավորված արժեհամակարգ գլոբալ մակարդակում փաստորեն գոյություն չունի: Իսկ քաղաքական առումով արևմտյան կողմնորոշումը մեզանում արդեն սկսել է տարամիտվել նվազագույնը երկու՝ անգլո-սաքսոնական կամ ատլանտյան և մայրցամաքային-եվրոպական արևելամենների:

Իր բովանդակությունից փաստորեն զրկվել է նաև Արևելքի՝ որպես ուժի բևեռի խորհրդային ընկալման մեխանիկական շարունակությունը դիտվող՝ «ռուսական կողմնորոշում» հասկացությունը: Որևէ մեկի համար այլևս գաղտնիք չէ, որ վերջին երկու տասնամյակների ընթացքում Արևմուտքին հակադրվելու համար Ռուսաստանի քաղաքական ղեկավարության որդեգրած Եվրասիականության դոկտրինը իր խորքային՝ հոգևոր-մշակութային բովանդակությամբ խորապես **հակառուսական բնույթ** ունի³: Նրա հիմքում ընկած բազային արժեքներից առաջինի՝ եվրոպականության լիակատար անտեսումը ժամանակի ընթացքում այն վերածել է Չինգիզ խանի կայսրությունը վերակերպավորած՝ միջնադարյան Մոսկովիայի տեսլականի, ինչն **ասիականության** ամենաբարբարոսական տարատեսակներից էր: Եվ երբ այսօր Ռուսաստանն ինքն է հայտնվել իր արևելաքրիստոնեական քաղաքակրթության արմատներին վերադառնալու հրամայականի առջև, իրարից վաղուց տարանջատված ու նախկին բովանդակությունից զրկված «Ռուսաստան» և «ռուսական կողմնորոշում» հասկացությունները մեզ համար փաստորեն միայն անվտանգային իմաստ ու նշանակություն են ձեռք բերել: Արժեքային առումով ռուսական կողմնորոշումն այսօր գոյություն ունի սոսկ ավանդական պավոնաֆիլության գաղափարը ձևախեղած Դուգինյան համադրությին հակադրվող՝ առաջադեմ ռուս մտավորականության որոշակի շերտերում, որի ներկայացուցիչները ևս հիմնականում միտված են դեպի Արևմուտք:

Միանգամայն հասկանալի է, որ գլոբալ հարթությունում նման բացահայտ անհավասարակշռության ամկայության փաստը չէր կարող իր ազդեցությունը չգործել նաև մեր երկրի ներքաղաքական իրողությունների վրա: Որովհետև Հայաստանում չկա ու չի կարող լինել մի քաղաքական ուժ, որն ի վիճակի լինի իրեն ու իր համակիրներին ստիպել երկրպագելու անձայրածիր տափաստանների քոչվորներին ու դրանց ռուս վերաբնակիչներին սոսկ ժամանակավորապես միավորած՝ «Եվրասիական արժեքները»: Ուստի՝ անցած տասնամյակներում Հայաստանը չէր կարող ներքնապես չեվրոպականանալ՝ անկախ նրանից, թե իրեն շրջապատող անվտանգային միջավայրը նրան թելադրում է Ռուսաստանի՝ որպես **պետության** պաշտպանական վահանը պահպանելու անհրաժեշտությունը: Եվ այս բացահայտ անհավասարակշռությունը ռազմավարական առումով անխուսափելի էր դարձրել Ռուսաստանի հետ իր խորհրդային պորտալարը պահպանած Հայաստանի իշխանության փոփոխությունը, որը տեղի ունեցավ ձիշտ այն պահին, երբ այդ իշխանությունն այլևս անգոր էր դիմադրելու իր առջև դրված՝ Արցախի ազատագրված տարածքների հանձնումով Ադրբեջանին ևս Եվրասիական Միության մեջ ներառելու ակնհայտ պարտադրանքին: Այդ մեծապետական ծրագրին դիմակայելու համար ՀՀ նախորդ իշխանությունների գործադրած բոլոր տեսանելի և անտեսանելի հնարքների սպառման գործընթացն էր ինչպես 2016-ի ապրիլյան տարօրինակ պատերազմի, այնպես էլ դրան հաջորդած ներքաղաքական զարգացումների և իշխանափոխության խորքային պատճառը⁴: Այսինքն՝ երբ Ռուսաստանը՝ որպես

3 Ավելի մանրամասն տե՛ս «Եվրասիականության մեր ընկալումը», «ՎԷՎ», 2016, N 3 (55) , էջ 3-8:
 4 Ավելի մանրամասն տե՛ս «Եռաչափ գործընթացի վտանգավոր հետագիծը», «ՎԷՎ», 2018, N 2 (62) , էջ 3-9:

պետության մեզ համար մի պահ կորցրեց անգամ իր վերջին՝ անվտանգային գործառնությունը, Հայաստանում նրանից երես թեքեցին նույնիսկ նրա ամենահավատարիմ զինվորները՝ այք փակելով իրենց իսկ տապալմանը տանող ներքաղաքական զարգացումների առջև:

Անցած զարնանը տեղի ունեցած իշխանափոխության առայժմ միակ շոշափելի ձեռքբերումը Հայաստանի միջազգային սուբյեկտայնության ամրագրումն է, ինչի արդյունքում մնալով նախորդ դաշինքների ու դրանցից բխող ռազմավարական պարտավորությունների շրջագծում, մեր երկիրը թոթափել է կողմնորոշումային քաղաքականության բեռը: Սա առաջ է բերել որոշակի դիսկոմֆորտ՝ ավանդական դաշնակիցների հետ շփումներում, բայց չի հանգեցրել նրանց լուրջ հակազդեցությանը:

Ավելին՝ Հայաստանի արտաքին քաղաքականությունը ձևավորող խորքային սուբյեկտի փոփոխությունը լուրջ խոչընդոտ է դարձել Ղարաբաղի հարցում նրան միակողմանի լուծումներ թելադրելու ճանապարհին: Որովհետև հայ ժողովուրդն արդեն պատմության գիրկն է նետել արտաքին զիջումների դիմաց երկիրը կառավարելու իրավունք ստանալու՝ նախկինների գործելակերպը: Եվ եթե Ռուսաստանում ավելի մեծ թվով հայերի առկայության մասին պնդումով նախկինում Մոսկվան վիճարկում էր Երևանի իշխանությունների՝ հայ ժողովրդին ներկայացնելու իրավունքը, այժմ գործ ունի ենթակայից՝ գործընկերոջ վերածված դաշնակցի հետ: Ուստի նոր պայմաններում նրա համար Հայաստանին պատժելը հավասարազոր է հայ ժողովրդին պատժելուն՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Բայց ամենահետաքրքրականն այն է, որ երբեմն բարկացածի տեսք ընդունելով հանդերձ՝ պաշտոնական Մոսկվան իրականում մտածում է ոչ թե մեզ պատժելու, այլ սիրաշահելու մասին: Որովհետև ո՛չ առանց իր քողարկված մասնակցության՝ ողջ հետխորհրդային տարածքում սկիզբ է առել հին ու նոր էլիտաների մի անհաշտ դիմակայություն, որը տանում է դեպի նոր հանգուցալուծում: Ավարտվում է 1990-ականների սկզբներին կոմկուսին փոխարինած խորհրդային ուժային կառույցների ղեկավարների «հետխորհրդային եղբայրության» դարաշրջանը: Անցած տասնամյակներում հիմնականում բնական ռեսուրսների թալանով զբաղված այդ կեղծ-պետականամետներից սկսել են երես թեքել անգամ նրանց ժողովուրդները՝ «տարուր» թողնելով ռուսներին:

Հետխորհրդային տարածքում սկիզբ առած հեղաբեկումները վկայում են նրանում կապիտալի նախնական կուտակման գործընթացի ավարտի մասին, ինչը ինքնակազմակերպման քաղաքական համակարգերի փոփոխության սուր պահանջ է առաջացրել: Կուտակված կապիտալը չի կարող օրինականացվել՝ «հետխորհրդային եղբայրության» կոռուպցիոն հենքի վրա: Նրան անհրաժեշտ են համաշխարհային շուկայում լեգիտիմություն ապահովող քաղաքական կառույցներ: Ուստի՝ մեր այքի առջև փլուզվում են ոչ միայն խորհրդային-կայսերական իդեալի, այլև նրա հետխորհրդային կարոտախտի տնտեսաքաղաքական հիմքերը: Նման պայմաններում մեր երկրում դեռևս դրանց կարոտով տառապողների հնացած հագուկապը օտարների գումակում Փարիզ մտած, բայց այնտեղ էլ սեփական ժողովրդի ծաղրուծանակին արժանացած՝ Բուրբոններին զարդարող փետուրներն է

հիշեցնում: Ու թեև «հետհեղափոխական Հայաստանում» պոտենցիալ Բուրբոնների պակաս չկա և անգամ՝ ավելցուկ է նկատվում, բայց ողջ խնդիրը նրանում է, որ կայսերական ռևանշիզմի խորհրդանիշի վերածված 11-րդ Կարմիր բանակի գումակում տեղավորվելու նրանց թաքուն երազանքն այլևս առարկայական հիմքեր չունի:

Պատճառն ակնհայտ է. Ռուսաստանն՝ ինքը նույնպես կանգնած է նույն պահանջմունքի՝ նորացման հրամայականի առջև, ուստի «փոքրիկ-չարածի» Հայաստանին պատժելը Մոսկվայի համար խնդրի լուծում չէ, այլ նոր փակուղի: Երբ Ռուսաստանի արտաքին դիմադրողականության ամրապնդման ու երկրի ներսում առկա համակարգի պահպանման առաջադրանքները սկսել են հեռանալ իրարից, նրա «խորքային պետության» համար ակնհայտ է դարձել, որ ռազմավարական լուծումը միակն է՝ որպես քրիստոնյա և ուղղափառ երկիր դառնալ Եվրոպայի շարունակությունն ու պատվարը՝ **Նոր Բյուզանդիան**, որը վաղ թե ուշ անպայման լեզու կգտնի իր պլավոն և ուղղափառ հարևանների հետ: Նման պայմաններում «փոքրիկ-չարածի» Հայաստանի կապանքների թուլացումն ու նրան համաքրիստոնեական ու համաեվրոպական ընդհանուր շահերի տարածաշրջանային սպասարկուի դերակատարության տրամադրումը **վաղորդ հաշվարկված** ու միանգամայն գիտակցված քայլ է թվում:

Ամենևին էլ չտառապելով «դավադրությունների տեսությամբ»՝ ոչ առանց հիմքի հակված ենք պնդելու, որ ինչպես ԽՍՀՄ-ի փլուզման դարաշրջանում, այնպես էլ անցած մեկ տարվա ընթացքում Հայաստանը վերածվել է Արևմուտքի հետ հարաբերություններում Ռուսաստանի համար նախընտրելի քաղաքակրթական բնորդի (մոդելի) փորձարկման հարթակի: Ուստի՝ մեզանում ծավալվող քաղաքական բեմականացումների **մակերևույթին** հայտնված «տրոսյան տիպի» խայտաբղետ դերակատարների առկայությունն ամենևին էլ չի կարող քողարկել այդ ավելի **խորքային՝ քաղաքակրթական** բնույթ ունեցող գործընթացի սկզբնավորումը, որի իրական նպատակները նոր են միայն բացահայտվում: Նրա բարեհաջող ընթացքն արդեն տեսանելի ապագայում մեծ շահաբաժիններ է խոստանում մեր երկրին, որն իր ավանդական՝ «քաղաքակրթական թթխմորի» դերը խաղալու պարագայում կարող է ընդմիջտ հրաժեշտ տալ դեռևս 19-րդ դարում հայոց քաղաքական արևելումների բարդ թնջուկի խորքում ձևավորված և շուրջ մեկ հարյուրամյակ Հայկական հարցը փակուղի մտցրած Արևմուտք-Ռուսաստան անլուծելի հակադրությանը (կոլիզիային):

Այլևս անհնար է չնկատել 2018-ին Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխության խորքային կապը՝ շրջափուլերի (ցիկլերի) տեսքով դրսևորվող՝ Ռուսաստանի արևմտականացման **պատմական անհրաժեշտության** հասունացման նոր հանգրվանի հետ: Ուստի՝ Ռուսաստանի արժեքային կողմնորոշման գործընթացի սկզբնավորման փաստը մեզ աստիճանաբար սկսել է ապահովել ոչ միայն մարտավարական գորաշարժերի նոր հնարավորություններով, այլև ընդհանուր շահերի նորացված ընկալման վրա հիմնված՝ աշխարհայացքային նոր մեկնակետով: Քաղաքակրթական նոր տարածքում ուրվագծվող այդ ընդհանուր շահերն են միայն, որ մեզ թույլ են տալիս Հայաստանի արտաքին քաղաքականության ասպարեզում նորովի

ինաստավորել հայկական կողմնորոշման գաղափարը: Քանզի նման պայմաններում «սառը պատերազմի» դարաշրջանին բնորոշ «կամ-կամ»-ի պարտադրանքին մեր սեփական հակազդեցությունը՝ «ոչ Արևելք, ոչ Արևմուտք» բանաձևը, շրջվում ու վերածվում է «և՛ Արևելք, և՛ Արևմուտք» սկզբունքի՝ շեշտակի կերպով ընդլսնելով Հայաստանի արտաքին գործընկերների շրջանակը:

Պատճառն ակնհայտ է. ժամանակին հայկական կողմնորոշման գաղափարի առանցքում առկա համայնքային-փակ կեցությանը բնորոշ՝ պաշտպանական գործառույթը պետականության առկայության պայմաններում արդեն իսկ փոխակերպվել է հայկական քաղաքակրթությանն ի սկզբանե բնորոշ՝ **համադրական գործառույթի**: Ուստի սեփական հողի վրա այդ համադրության ու սինթեզի իրականացման առաջադրանքը կարող է ներդաշնակորեն տեղավորվել այն նոր քաղաքակրթական տարածքում, որն ուրվագծվում է Ռուսաստանի արևմտականացման պատմական անհրաժեշտության համատեքստում: Դրանով պետականորեն կազմակերպված հայկական քաղաքակրթությունը ներդաշնակ երկխոսության հնարավորություն է ստանում ԱՄՆ-ում՝ իր սարայանների ու արշիվգորկիների, Եվրոպայում՝ ազնավորների ու միջեյլեգրանների, Ռուսաստանում՝ այվագովսկիների ու վախթանգովների ձևավորած մշակութային ընդհանուր հենքի վրա: Բայց այդ ամենը մեզ չի գրկում նաև Չինաստանի, իսլամական աշխարհի ու մանավանդ՝ Իրանի հետ ավանդական կապերի խորացման հնարավորությունից:

Ներկայումս գլոբալ մակարդակի վրա աննկատ կերպով թափ հավաքող՝ քաղաքակրթական նոր տարածքի ձևավորման անկասելի ընթացքը՝ մի կողմից և մեր հարևան Թուրքիայի՝ քաղաքակրթությունների կամուրջի վերածվելու փորձերի ձախողման ակնհայտ իրողությունը՝ մյուս կողմից, մեր առջև ուրվագծում են ոչ միայն Դարաբաղի հարցի արդարացի լուծման, այլև **դեպի Արարատ** դիմաշրջվելու և Հայկական հարցը վերաբացելու հուսատու ուղիները:

Խմբ.:

THE REVIVAL OF ARMENIAN ORIENTATION

Edit.

ВОЗРОЖДЕНИЕ АРМЯНСКОЙ ОРИЕНТАЦИИ

Ред.